ՊԱՇՏՈՆ՝	Անձնակազմի ուսուցման և զարգացման կենտրոնի ղեկավար | Head of Learning and Development center
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ՝	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ՝	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ՝	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲ՝	18/07/2024թ.
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ՝	09/08/2024թ.
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ՝	Անժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն Անձնակազմի ուսուցման և զարգացման կենտրոնի ղեկավարի հաստիքը զբաղեցնելու համար փնտրում է փորձառու և մոտիվացված թեկնածուի, ով պատասխանատու է ստորև նշված պարտականությունները կատարելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ապահովել Բանկի աշխատակիցների համար ուսումնական ծրագրերի, նյութերի կազմման, վերապատրատումների կազմակերպման, անցկացման և արդյունավետության գնահատման, վերապատրաստված աշխատակիցների կարծիքների և ցուցաբերած արդյունքների ամփոփման գործընթացների պատշաճ իրականացումը,
- Իրականացնել Բանկի վերապատրաստումների ներքին պորտալի վարում և վերահսկողություն,
- Ապահովել Բանկի աշխատակիցների վերապատրաստման կարիքների պարբերական ուսումնասիրության, բացահայտման, աշխատակիցների համար մշակված անհատական զարգացման պլանների կազմման գործընթացները շահագրգիռ ստորաբաժանումների ղեկավարների հետ միասին,
- Կազմել վերապատրաստման տարեկան պլանը և բյուջեն,
- Ապահովել և վերահսկել աշխատակիցների մասնագիտական կարողությունների, գիտելիքների, անձնական հատկանիշների և վարքագծի, աշխատանքային ունակությունների և յուրաքանչյուր աշխատակցի՝ զբաղեցրած պաշտոնին համապատասխանության գնահատման գործընթացը Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով,
- Համագործակցել ՀՀ և միջազգային բանկային, ֆինանսական և այլ հարակից բնագավառներում ուսուցում և խորհրդատվություն իրականացնող կազմակերպությունների հետ,
- Բարելավել ուսուցման և վերապատրաստման մեթոդներն ու եղանակները՝ կիրառելով միջազգային լավագույն փորձն ու նորամուծությունները,
- Կազմել և ներկայացնել համապատասխան հաշվետվություններ Բանկի կառավարման իրավասու մարմիններին:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Վերապատրաստումների կազմակերպման և անցկացման առնվազն 4 տարվա աշխատանքային փորձ
- Վերապատրաստումների և գնահատումների պլանների կազմման փորձ
- Ներքին պորտալների պատրաստման, նյութերի հավաքագրման և կայքերի մշակման և թարմացման փորձ
- ՀՀ բանկային և Աշխատանքային օրենսդրության իմացությունը կդիտվի որպես առավելություն
- Արդյունավետ բանակցություններ և հանդիպումներ վարելու հմտություն
- Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների գերազանց իմացություն
- Գերազանց բանավոր և գրավոր հաղորդակցման հմտություն
- Կազմակերպչական և վերլուծական հմտություններ
- Թիմի ղեկավարման և թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Տարբեր իրավիճակներում աշխատելու, խնդիրների արդյունավետ լուծման և արագ կողմնորոշվելու ունակություն

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/60: Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ անվանումով: «ԱյԴի Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ https://www.idbank.am/